




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mshak».

խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանակը բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԻՐԱՅԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական
ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բազմաբնույթ փողոցների ան-
կիւնում, Թամաշիւկի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվում համար պէտք է ղրկել հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газетъ «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Արհեստների անհրաժեշտութիւնը. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Քաղաքական տեսութիւն. Արտաքին լու-
րեր. — ԽԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ. — ՊԱՏԱՍ-
ԽԱՆԵՐ. — ՅԱՅԱՍՏԱՆԻՆԵՐԻՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Ազատայ յանցանք.

ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԱՆՀՐԱՔԻՆՏՈՒԹԻՒՆԸ

Վաղը, կիրակի օր, լինելու է Թիֆլիսի Ար-
հեստաւորաց զորոցի տարեկան Տանգէր:
Թէ ի՞նչքան արդիւնք է ցոյց տալիս այդ
զորոցը մեր մէջ արհեստները տարածելու
գործում, ի՞նչ առաջադիմութիւն են ա-
նում զորոցի աշակերտները տարուց տարի,
— դեռ ևս դժուար է որոշ կերպով ասել:
Բայց մի բան անհերքելի է որ Արհեստա-
ւորաց զորոցի պէս հիմնարկութիւններ,
որոնք տարածել են և տարածել են արհեստ-
ները մեր երկրում, անհրաժեշտ են մեր
երկրի համար և ցանկալի կը լինէր որ
Թիֆլիսի Արհեստաւորաց զորոցի պէս
զորոցներ, որոնց մէջ մեր ամբողջ սովորէր
այլ և այլ ձեռքի արհեստներ, բազմապիսի
Անդրկովկասում:

Ամերիկացիները ունեն կեանքի մի շատ
զեղեցիկ կանոն: Ամերիկացին ասում է.
«Բանի որ կենդանի ու առողջ ես, ոչ մի
բույս արեւմտեան միջոցից հանգստութիւն մի

տուր ոչ քո ձեռքերին, ոչ էլ քո ուղեղին.
ձեռքերդ և ուղեղդ բաւական ժամանակ
ունեն հանգստանալու երբ որ դու քնած
ես լինում»:

Մեր արեւելեան ազգերի ամբողջ մէջ,
ընդհանրապէս, միշտ նշմարվում է ձգտ-
ում դէպի անգործութիւն, դէպի Ֆիզի-
կական և մտաւոր անգործութիւն:

Հայը դարձեալ մի բացառութիւն կարող
է համարվել արեւելեան անշարժ, քնած ազ-
գերի՝ պարսիկների, թուրքերի մէջ, իր
գործունէութեամբ, իր եռանդով իր ձեռք-
տուածով աշխատելու, փող վաստակելու,
բայց և հայոց դուրսէ միայն դիւղական
ազգաբնակչութեան մէջ նշմարվում է այդ
ձգտումը դէպի տոկոս աշխատանքը, այն
ինչ մեր քաղաքային ազգաբնակչութիւնը
աւելի ծանր ունի դէպի փող վաստակելը,
առանց ծանր Ֆիզիկական աշխատանքի,
առանց մտաւոր գործունէութեան:

Քաղաքային հայոց ազգաբնակչութիւնը
ամեն տեղ աւելի հակում ունի դէպի
առեւտուր: Բայց որովհետեւ մեզանում
երկրի հանգամանքների շնորհով չը կայ
և չէ կարող լինել լայն, մեծ, ընդարձակ
առեւտուր, որը առաջ տանելու համար
հարկաւոր է գոնէ մտաւոր գործունէու-
թիւն՝ ֆինանսական ընդունակութիւն, այլ
մեր ամբողջ առեւտուրը ուրիշ բան չէ,
եթէ ոչ մանրավաճառութիւն, — ուստի մեր
ազգի մի ամբողջ ահագին դասակարգ, իր

պարագմունքի տեսակի շնորհով մնում է
զուրկ թէ մտաւոր և թէ ֆիզիկական օր
և է վարժութիւնից:

Եւ ճշմարիտ, դրանից ի՞նչ աւելի հեշտ
բան կայ՝ մանրավաճառութեամբ պարագմ-
ուն: Մի առողջ, հասակ առած տղամարդ,
հէնց որ մի կերպ դիպած է լինում մի
300 կամ 500 ռուբլի գումար, նա անմի-
ջապէս մի խանութ է բացանում և ըսկ-
սում է առեւտուր անել: Այստեղ ոչ ֆի-
նանսական հաշիւներ, ոչ որ և է բաղադրեալ
կոմբինացիաներ են հարկաւոր, ոչ էլ ձեռ-
քերի աշխատանք: Մանրավաճառը գնում է
ուրիշ երկրի, առնում է էփան, գուցէ և
փտած ապրանք, բերում խանութը դար-
սում, որպէս զի աւելի թանկ ծախի, և
ամբողջ օր, առաւօտից մինչև երեկոյ,
մուշտարուն սպասելով անգործ է մնում:
Այդպիսով ոչ նրա ձեռքերն են բանում, ոչ
էլ ուղեղը աշխատում: Մարմնով պարագմ,
ուղեղով պարագմ, մեր վաճառականը պա-
տահական մուշտարուն սպասելով ու ամ-
բողջ օրը անգործ մնալով այնքան ընտելա-
նում է պարագմութեան, որ այլ ևս անըն-
դունակ է լինում թէ որ և է ֆիզիկական
աշխատանքին, թէ մտաւոր կեանքին:

Նստելով ամբողջ օր իր խանութի դրան
առջև կատարելապէս անգործ, պարագմ, թէ
ֆիզիկական և թէ մտաւորապէս, մեր վա-
ճառականը ընտելանում է այդ տեսակ ան-
շարժ կեանքին. նրա մարմնի գործարաննե-
րը կորցնում են իրանց ճիւղնութիւնը, նա
ամբողջ մարմնով գերանում է, նրա ուղեղը
մի տեսակ քնած դրութեան մէջ է ընկ-
նում, նրա մտաւոր կարողութիւնը երբեք
չը վարժվելով յայտնի աստիճանով ա տ-
րօ ֆիզիկային է հասնում, անդամաւոր է
լինում:

Այն ազգերը թէ մարմնով թուլամորթ
են լինում, թէ ուղեղով անշարժ և քնած
դրութեան մէջ են լինում, որոնց քաղաքա-
յին ազգաբնակչութեան մէջ տիրապետում է
զլխաւորապէս առեւտրական դասակարգը:
Այն ազգերը, ընդհանրապէս, որոնց մէջ
կայ բաւական մեծ կոնսիդերանս ֆիզիկա-
կան աշխատող տարրերի, բանաւորների, ար-
հեստաւորների, տեխնիկների և այլն, — այդ
տեսակ ազգեր աւելի պահանջ ունեն և
մտաւոր կեանքի:

Ֆիզիկական տոկոս և կանոնաւոր
աշխատանքը զարգացնում է մարդու մէջ
և պահանջ դէպի մտաւոր կեանքը:

Այդ է պատճառը որ մեզ ցանկալի է որ
մեր հայոց ազգաբնակչութեան մէջ աւել-
ի և աւելի զարգանային՝ արհեստներ,
արուեստներ, տեխնիկական պարագմունք-
ներ, գեղարուեստ, ֆիզիկական աշխատանք,
որ բնական օրէնքի շնորհով ստեղծում է,
ծագնում է մարդու մէջ և պահանջ դէ-
պի մտաւոր կեանքը... Այդ է պատճառը որ
մենք չենք կարող չուրախանալ, երբ տեսնում
ենք որ մեզանում վերջապէս սկիզբ են առ-
նում արհեստաւորաց, այգեգործական,
տեխնիկական զարգացման պէս կրթիչ հաս-
տատութիւններ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոր տարվայ հետ միասին սկսվեցաւ ձմեռը
ԹԻՖԼԻՍԻՄ: Յունվարի 1-ին և հետեւալ օրերը
այնքան խոր ձիւն եկաւ, որ կարելի եղաւ սահ-
նակներով մանդալ փողոցներում:

Այս տարի սկսեց հրատարակվել պ. Ֆրէնկելի
խմբագրութեամբ «Кавказское Обозрение» ու-
սաց ամսագրեայ թերթը: Մենք չենք կասկածում
որ պ. Ֆրէնկելի թերթը կարող է տեղական ու-
սաց լրագրութեան մէջ իր արժանաւոր տեղը
բռնել և մի յայտնի դեր խաղալ, բայց մեզ ան-
հասկանալի է պ. Ֆրէնկելի մարմնու- ցանկու-
թիւնը, որ նա արտայայտել է յիշեալ լրագրի
2-րդ համարում տպւած խմբագրին ուղղված իր
նամակում, որ պ. Ֆրէնկելի թերթը լրացնէր այն
պակասը, այն բաց տեղը, որ Սիմոնեանցի «Վե-
րու Հայաստանի» լրագրի, դադարեցնելով իր
զոյգութիւնը, թողել է հայոց մամուլի մէջ: Հար-
կաւոր է, ասում է պ. Ֆրէնկելի, մի հակակշիռ
միւս հայոց թերթերի դէմ և «Վերուի» խափանվե-
լուց յետոյ, այդ պաշտօնը կարող է խաղալ տե-
ղական ուսաց լրագրութիւնը (ախարկութիւն
Ֆրէնկելի թերթի վրա երեկ): Ներդրութիւն ենք
խնդրում պ. Ֆրէնկելի մարմնու- ցանկու-
թիւնը, որ, ինչպէս ասում են՝ մեր
խելքը իսկի չէ կտրոււմ, թէ ինչպէս Ֆրէն-
կել իր օրգանով, որ խոստանում է մարտնչել
քաղաքակրթութեան համար, անկողմնապահ վե-
րաբերվել դէպի բոլոր տեղական ազգութիւն-

դարձեալ փորձում էր համոզել իր հօրը:

— Դուք ասացիք, հայրիկ, որ քաղաքում քիչ
չեն օրինաւոր ընտանիքների աղջիկներ, շարունա-
կեց նա, բայց Նիմայի ընտանիքը դուք ինքներդ
միշտ ամենաօրինաւոր ընտանիք էք համարել և
իրան խմբային է: Ինչ անենք որ նրանք գերմա-
նացիք են: Դուք գիտէք որ նրա հայրը մի օր-
նաւոր, համեստ արհեստաւոր է, որ նոյն իսկ
լաւ կարողութիւն է դիպել իր համեստ, տոկուն,
ազնիւ աշխատանքով, գիտէք նոյնպէս որ այդ
ընտանիքը մեր վաղուցվայ հարեաններ լինելով
ես ու քոյրս միշտ մեր քրոջ պէս ենք սիրել իմ
մայրն ու նրա հետ միշտ վարվել ենք, ինչպէս
հարազատ քրոջ հետ. գիտէք էլ որ Նիմայի մանուկ
եղած ժամանակ կորցրել է իր մօրը և նոյն իսկ
ձեր խորհրդով ուսում է առել Մարիամիկի հետ
միասին Գ.... ուսումնաբանում: Եթէ դուք հայու-
թեան տեսակէտից էք խօսում և ուզում էք ար-
գել ինձ Նիմայի հետ պատկվել՝ որովհետեւ նա
հայուհի չէ, դուք ինքներդ շատ լաւ գիտէք որ
Նիմայի աւելի լաւ գիտէ և խօսում է հայերէն,
քան թէ մեր քաղաքի ձեր հայ անուանված օր-
որդիներից շատերը, գիտէք էլ նոյնպէս որ Նիմայի
բողբաջական դաստիարակումը պատկանելով, մեր
երեխաները, եթէ ունենաւու ենք, միջոցաւ են
հայ-ուսաւորական... Ուրեմն ինչ է պատճառը,
որ դուք ընդդէմ էք այդ ամուսնութեան...
— Ես աւելորդ եմ համարում շարունակել խո-
սակցութիւնը այդ առարկայի մասին, կարծի կըն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱՄԱՅ ՅԱՆՏԱՆԻ

(ՎԷՊԻՆ)

I

— Հայր, ես գալիս եմ ձեր օրհնութիւնը ստա-
նալու, ես վճել եմ պատկիւն...

— Դու ազատ ես պատկվելու, որդիս, դու ան-
կախ մարդ ես, բոխիկ ես, քսան և ուժ տարե-
կան ես, և ես իմ օրհնութիւնս քեզ մերժելու
չեմ, — բայց կարծի եմ, արդեօք, իմանալ թէ ո՞վ է
քո ընտրած աղջիկը...

Այդ խօսակցութիւնը օրդու և հօր մէջ տեղի
էր ունենում Ն. քաղաքի, Ն.... թաղի հին, մի-
յարկանի աներից միմաս:

Մօտ եօթնամասուն տարեկան ծերունի Մ.... մի
ժամանակ պետական ծառայութեան մէջ էր, բայց
վաղուց է արդէն հրաժարական էր տուած ծառա-
յութիւնից և ապրում էր արքունի թոշակով: Տու-
նը, որտեղ տեղի էր ունենում վերոյիշեալ խօսակ-
ցութիւնը, պատկանում էր ծերունուն: Հրաժարվե-
լով պետական ծառայութիւնից և յետ քաջվելով
մասնաւոր կեանքը, ծերունի Մ.... իրան կատա-
րելապէս նուիրեց իր երկու զաւակներին, որդու և
աղջկայ կրթութեանը, չը խնայելով իր սուղ նիւ-

թական միջոցները իր երկու զաւակներին օր-
նաւոր ուսում տալու համար: Աղջիկը հայոց օր-
որդական Գ.... ուսումնաբանում ուսում առնելուց
յետոյ, մտաւ իգական գիմնազիա, որտեղ և ա-
ւարտեց իր ուսումը. նա այժմ քսան տարեկան
էր: Որդին Ռուսաստանի համալսարաններից մի-
նում բժշկականութիւնը սովորելուց յետոյ, երկու
տարի է որ վերադարձել էր մայրենի քաղաքը,
ունէր արդէն քաղաքում բաւական ընդարձակ
բժշկական պրակտիկա և, բացի սրանից, որպէս
բժիշկ, պետական ծառայութեան մէջ լաւ պաշ-
տօն ունէր:

— Ես գիտէի, հայրիկ, որ դուք մերժելու չէիք
ինձ ձեր օրհնութիւնը, շարունակեց երիտա-
ւարդը, բայց դուք ուզում էք իմանալ թէ ո՞վ
է այն աղջիկը, որի հետ ես վճել եմ պատկիւ-
նը, — դուք միթէ չէք գուշակում, որ դա իմ ման-
կական ընկերուհի է, որին դուք էլ միշտ սիրել
էք ձեր աղջկայ պէս, միթէ դուք չէք գուշակում,
որ դա մեր հարեանի աղջիկն է, Նիմայի...

— Եւ մի... չէ, Գէորդ, դու դրա հետ չես պը-
սակվի, ես չեմ թող տայ, կտրական և կոշտ
կերպով պատասխանեց ծերունի Մ....

— Ինչի...

— Որովհետեւ... վերջապէս, քիչ կան քաղաքում
օրինաւոր աների աղջիկներ, հայուհիք, իսկ իմ
ման գերմանուհի է, օտարուհի է, և... ես չեմ
ուզում, որ իմ ընտանիքիս մէջ մտնի օտար տա-
րը:

Գէորդը լուռ և զարմացած նայում էր հօր
վրա:

— Դու շատ լաւ գիտես, որ ես այն հայրերից
չեմ, շարունակեց ծերունին, որոնք ստիպում են
իրանց որդուն մի չը սիրած, բայց անպատճառ
բաժինը ունեցող, հարուստ աղջկայ հետ պատկվե-
լու. դու կարող ես և մի բոլորովին աղքատ աղջ-
կայ հետ պատկվել, բայց ես ուզում եմ, աւելա-
ցրեց նա հրամայական ձայնով, որ կինդ ան-
պատճառ հայուհի լինի, և ոչ թէ օտարուհի...

Հասկացանք...
— Հայրիկ, ես խոստովանում եմ, որ ոչինչ
չեմ հասկանում ձեր ասածից, խոստովանում եմ,
որ այս րօպէիս դուք ինձ բոլորովին ուրիշ մարդ
էք երևում... Դուք, որ միշտ այդքան լայրի էք
եղել դէպի ինձ և դէպի Մարիամիկ քոյրս, դուք
որ ոչինչ չէք իմացել մեր երկուսին կրթութեան
համար, դուք, որին ես միշտ համարել եմ հօր
մարդասէր մարդու կատարելատիւ, — յանկարծ
դուք ուզում էք արգելել լինել ձեր սիրում որդու
բաղդին: Ես կրկնում եմ՝ Նիմային ես սիրում եմ
և զգում եմ որ նա միայն կարող է լինել իմ ա-
մուսնու...

— Ո՛հ, նա քո ամուսինը լինելու չէ, կրկնեց
ծերունին, բարձրացնելով ձայնը:

Երկունին սաստիկ յուզված էր երևում. նրա
գեղքը ալլալված էր, ձայնը դողում էր... Առա-
ջին անգամ էր իր կեանքի մէջ, որ Գէորդը
տեսնում էր իր հօրը այդ դրութեան մէջ: Նա

ները, այժմ յանկարծ Սիմֆոնիանցի խաւարամիտ, նեղհայեաց, տիրացուական, անձնական կրքերն արտայայտող, նախանձուտ, կոյր աւանդական թերթի ժառանգ պիտի դառնայ: Պրանսիացիք ասում են «Il faut laver son linge sale en famille» և շատ հաճելի էլ չի լինի եթէ «Кавказское Общество»-ի պէս լայն, քիչ է մնում հաւանական զգալի պորթրայտով լոյս տեսած թերթը յանձն առնէր շարունակել «Մեղուի» տընային կեդոտ լուսաքը լուսնալու ի դիմաց ամբողջ ռուսաց ընթերցող հասարակութեան:

Այս օրերս հասել է թիֆլիս խորէն վարդապետ Ստեփանէ և այստեղից ուղևորվում է Ս. Պետերբուրգ, հայոց եկեղեցու քարոզչի պաշտօնով: Ուրախալի է որ մեր գրեթէ միակ հոգևորականը, որ բարձրագոյն ուսում է ստացել, նշանակված է այնպիսի մի պաշտօնի վրա, ինչպէս քարոզչի մայրաքաղաքի հայ հասարակութեան:

Մենք լսում ենք որ հայր Ստեփանէ իր արքայի ժամանակ զբաղված է եղել գրական աշխատանքով. նա Հաղատի վանքում թարգմանել է աշխարհաբար լեզուով Մովսէս խորենացու պատմութիւնը, որ և դիտարկութիւն ունի Ս. Պետերբուրգում լոյս ընծայել:

Յունվարի 4-ին թիֆլիսի քաղաքային տան մէջ նոր ընտրված ձախարհները երկուստեքն և այնուհետև կատարվեցաւ քաղաքացիական ընտրութիւնը: Ընտրվեցաւ թիֆլիսի քաղաքացիների պաշտօնի վրա ձայների մեծ առաւելութեամբ դարձեալ նախկին քաղաքապետ Ալեքսանդր Մատիւնով: Ընտրվելուց յետոյ պ. Մատիւնով շնորհակալութիւն յայտնեց ընտրողներին և ասեց որ ծառայելու է նոյնպէս, ինչպէս ծառայել է անցեալ ութ տարի շարունակ:

Լսում ենք որ հայր խորեն Ստեփանէ և մի քանի ախպրակցներին գործին, որոնք քրէական յանցանքում էին մեղադրվում՝ եկեղեցում անկարգութիւն անելու մէջ, վերջ տրվեցաւ որ և է հաստատ ապացոյցների բացակայութեան պատճառով: Մեղադրվածները որ և է մեղադրանքից անսպարտ յայտնվեցան:

Մեղ խորեն և ուղղել հետեւալ սխալը, որ մտաւ «Մշակի» անցեալ տարվայ 143-որդ համարում տպված Մովսէլայի նամակի մէջ: Ուսանողական ներկայացման անտարակտամ հայոց բժանա «ինձ համար չէ» երբեք ոչ թէ ռուս երգչուհի տ. Վոսկրեսնայայ, այլ մի հայ աղջիկ, օրիորդ Թովմասեան:

ՇՈՒՂԱՎԵՐԻՑ մեղ գրում են, որ անցեալ տարվայ «Մշակի» 148-որդ համարում տպված լուրը՝ Բօրչալու թուրքերի մասին, լի է սխալ տեղեկութիւններով: Եթէ ուղիղ է, որ թղթակցը իրան թող է տուել անձինք տեղեկութիւններ հաղորդել:

Ինչ ծերունին և վերկնալով բաղկաթուից, որի վրա նա ամբողջ խօսակցութեան ժամանակ նըստած էր, անհաստատ քայլերով անցաւ. սենյակի միջով, դիմելով դեպի պատշգամբի դուռը. ծերունին յուզված էր, նրա դէմքը կարմրել էր, նրա չնչառութիւնը ծանր և անհաստատ էր դարձել: Կամենալով պատշգամբը գուրս դալ աղատ և մաքուր օդ չնչելու համար, նա բալկոնի դրանք հասած կանգ առաւ և դուռը դեռ չը բացած՝ նորից դարձաւ դէպի օրդին:

—Ես կրկնում եմ քեզ, Գեորգ, դու նիւթապէս անկախ մարդ ես, ինձանից կախված չես և կարող ես, ի հարկէ, պահվել ում հետ որ ուզում ես. ես էլ այն հայրերից չեմ, որոնք անխիղճ են իրանց անհնազանդ զաւակներին, բայց իմ վերջին խօսքը սա է. եթէ դու կը պահվես չմայի հետ, ըստ իմ մէջ յարաբերութիւնները այլ եւ ընդ միշտ կտրված համարել... Գու ալ ես իմ օրդի չեմ լինի, ոչ էլ ես ըստ հայրը, հասկացանք: Մենք այնուհետև միմեանց երբեք չենք տեսնի, միմեանց կատարելապէս օտար կը լինենք: Արն ինչպէս դիտես...:

Ծերունին բաց աղաւ բալկոնի դուռը, շտապով դուրս եկաւ. սենյակից և իր ետեւից պինդ խփեց դուռը:

Երիտասարդ բժիշկը մի քանի վայրկեան մնաց չուրաքածի պէս սենյակի մէջ տեղ, յետոյ մօտեցաւ սեղանին, վերցրեց զլիսարկը և առանց իր քրոջ, Մարիամիկին, չբարի լոյս՝ ասելու, դուրս

խմբադրութեանը, մենք այսուհետեւ կը զգուշանանք նրա ձեռքով զբաղ որ և է նամակին հաւատ ընծայել և մանաւանդ տպագրել նրա հաղորդութիւնները:

«Մշակը» անցեալ տարվայ իր համարներում անդադար ուղարկութիւն էր դարձնում մեր գիւղերում կատարվող անպախաճա պատկերի վրա: Այժմ մեղ գրում են Շուշալուց թէ վերջապէս հոգևորականութիւնը սկսեց ուղարկութիւն դարձնել այդ գեղծանքների վրա և սկսեց խտիւ աղբիւր դեռահասների պատկեր կատարելու: Մի քանիսն իրարանքի պատրաստութիւնները դուր անցան և մի քանիսն էլ այդ տեսակ պատկեր կատարելու համար տուգանքի ենթարկվեցաւ:

Մեղ գրում են ՇՈՒՂԱՎԵՐԻՑԻՑ, որ մեր բանաստեղծ Բաքալէ Պատկան և ան խիստ աղկար լինելով, ուղևորվել է Մոսկվա, հմուտ բժիշկների ձեռքով մի օպերացիա անել ապու համար: Իսկ այդ ժամանակ, օգուտ քաղելով բանաստեղծի բացակայութիւնից, նոր-նախկինացիք՝ զբոլած հայերի յատուկ ատեղութիւնից՝ դէպի իրանց գործիչը, աշխատում են կամ զրկել Պատկանի հանդէս Նոր-Նախկինացի արհեստաւորացի զբոլորի տեսչութեան պաշտօնից, կամ նոյն իսկ իսպառ փակել զպրոցը և այդպիսով փողոց չպրտել անօգնական դրութեան մէջ բանաստեղծին և նրա ընտանիքը: Ահա երևի այդպէս պիտի կատարեն նոր-նախկինացիք իրանց երեւելի հայրենակցի՝ 35-ամեայ յօբելանսը: Գա չէ՝ նշանակում միթէ ամեն տեսակ բարոյականութիւնից դուրս լինել: Իսկ մի և նոյն ժամանակ Պատկանի հանդէսը զբոլոր և նոյն բարոյական նոր-նախկինացիք կատարում են՝ ղեկտեմբերի 28-ին մի ինչ որ Զարփեան քանդակի վարժապետական ասպարիղի 25-ամեայ յօբելանսը, տալով ի պատիւ նրա մի հացիկերով և ընծայելով նրան 500—600 ռուբլու ընծաներ:

ԲԱՊՈՒՅԻՑ մեղ ուղարկված է հետեւալ նամակը: Այսօր, յունվարի 1-ին, ժամի 11-ին կայացաւ տեղի Բօրչալի բացումը, ներկայութեամբ քաղաքապետի և Բօրչալի մասնաժողովի բոլոր անդամների (թուով մօտ 200): Մարթանքներից յետոյ, որ կատարեցին նախ ռուսաց հոգևորականները, յետոյ հայոց քանանները և ապա մասնական մօլլաները, ձախերով իջաւ ձախի ժամանակ Բօրչալի մասնաժողովի նախագահ պ. Արամեան բաժակ առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան թագաւոր Կայսրի կենացը, որ ընդունվեցաւ բարձրաձայն «ուրաներով»: Ապա առաջարկեցաւ կատարվեցաւ իշխան Գեորգիւս-Կօրնակովի կենաց համար բաժակը և խմելեցան առանձին առանձին՝ գաւառապետի, քաղաքապետի, Բօրչալի նախագահի, մասնաժողովի անդամների և այլ կենացներ: Ամբողջապէս ուղարկվեցաւ հետագի Ֆինանսների մինիստրին հետեւալ բովանդակութեամբ. «Այսօր բացվում է Բօրչալի և խմում ենք թագաւոր Կայսրի և ձեր կենացը»:

Եկաւ հօր տանից, ուղևորվելով դէպի իր բնակարանը:

II
Քաղաքի Ս. արիստօկրատական թաղի մի գեղեցիկ և բազմապարկ տան դռներից մինի վրա պնդացած էր մի պղնձեայ տախտակ, որի վրա մեծ և որոշ տառերով հայերէն և ռուսերէն լեզուով փորագրված էր «Բժշկապետ Գեորգ Մ. ընդունում է հիւանդներին շարաքը երկը անդամ, այս ինչ ժամից մինչև այս ինչ ժամ»: Ծերունու տանը՝ հօր և օրդու մէջ տեղի ունեցած խօսակցութիւնից միւս օրը, վաղ առաւօտեան 7 ժամին, մի գեղեցիկ օրիորդ դանդաղ էր տալիս բժշկապետ Մ-ի դրանը:

—Երբեք տանն է, հարցրեց նա դուռը բաց անող ծառայիչը:

—Այո, բժշկապետը տանն է, եղաւ պատասխանը:

Օրիորդը չնորհալի և թիթի քայլաւորով, գրեթէ վաղ տալով բարձրացաւ սանդուղանից, մտաւ նախասենյակը, շտապով անցաւ ընդունարանն ու դռնից և ուղղվել մտաւ երբոր առանձնատանի:

Երիտասարդ բժիշկը նստած էր իր առաւօտայ գլխով իր գրասեղանի մօտ: Քրոջ մանկուհի աղջկան հետ տեղից վեր կացաւ, ժպտալով մօտեցաւ նրան, հանդուրժեց Մարիամիկին և նստացնելով նրան դիմանի վրա, դիմեց նրան հարցնելով թէ ինչ է պատճառը նրա այստեսակ կա-

նացնելու: Հետագի ուղարկվեցաւ և կովկասեան կատարվեցաւ:

Որքան մեր հոգևորականներից ոմանք մտաւորապէս զարգացած են, կարելի է տեսնել հետեւալ օրինակից: ՇՈՒՂԱՎԵՐԻՑԻՑ արհեստաւորացի զարգում, ինչպէս մեղ գրում են այդ քաղաքից, հոգաբարձուները նորերումս մտքին երգեցողութեան դասերը և արդէն տղաները բաւական լաւ երգում են եկեղեցում: Երգեցողութեան մէջ աշակերտներին կանոնադրապէս վարժեցնելու համար հարկաւ պէտք էր ունենալ մի որ և է պիտի օր և անա հոգաբարձուք 12 ռուբլի ամսականով վարձեցին մի պիտի: Հաղիւ այդ քայլն արեցին հոգաբարձուք, Նոր-Նախկինացի մի հոգևորական, Կիրիլ վարդապետը, հետեւալ կիրակի օրը եկեղեցում քարոզ է խօսում այդ իր կարծիքով վտանգաւոր նորամուծութեան մասին, յայտնելով որ պիտի մի սատանայական գործիչ է: Կիրիլը ոչինչ պաշտօն չունի և դանդաղ են մի քանի մարդիկ, որոնք ուղեցել են այդ վարդապետի համար կրօնաւսուցչի պաշտօնը խնդրել քաղաքի զարգացումը:

ԹԵՄԻՍԻՍԻՑ ՇՈՒՂԱՎԵՐԻՑԻՑ մեղ գրում են, որ այդ քաղաքում առևտուրը այժմ շատ թույլ է: Առաջին հարկաւորութեան միջոցների գնները հետեւեալներն են. թխած հացի ֆունտը առաջին տեսակի արծէ 2 1/2 կօպ., ցորենի պուրը արծէ 65—70 կ., դարու պուրը 50 կօպ., տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 6 կօպ., երկրորդ տեսակի 5 կ., ոչխարի միսը 6 կօպ., ալիւրի պուրը 1 ռ. 10 կ., մինչև 1 ռ. 15 կօպէի:

Հրատարակված է 1887 թվ. մուգը և երբ պետական հաշուեկշիռը. պետական սովորական մուգը հաշված է 793,118,046 ռուբլի. իսկ սովորական երկր գումարը համարում է 829,676,680 ռուբլու: Կրանից երևում է, որ գեֆիցիտը հասնում է 36,558,634 ռուբլու: Նաւահանդիսներ և երկաթուղիներ կառուցանելու համար հաշուեկշիռը մէջ՝ ծախք ցույց է տրված 48,414,194 ռուբլի: Ֆինանսների մինիստրը իր գեղեցիկ մէջ այդ 36 1/2 միլիոնի գեֆիցիտը համարում է երկարատև անտեսական ճգնաժամի հետեւեալ:

Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ Գեորգիւս շնորհված է ս. Աննայի չըբանչանի առաջին աստիճանը, և Անդրկովկասի Մոսկովի Հուսէյն-Ֆէյզիլին ս. Վլադիմիրի երրորդ աստիճանը:

ՄՈՍԿՎԱՅԻՑ ՀԵՒԼԻԱՅԻՑ գործակալութիւնը մեղ հետգրում է, որ յունվարի 5-ին, կէսօրից յետոյ ժամը 2 1/2-ին, Պօլտեւսկիական մուգին մէջ տեղի ունեցաւ բժիշկների առաջին ժողովի նստի հանդիսաւոր բացումը, ներկայութեամբ գեներալ-նահանգապետի, ռուսաւարանական չըբանի հոգաբարձուի, պրօֆէսորների, բժիշկների և բաղ-

նուսն այցելութեան:

—Գեորգ, աղաչում եմ քեզ, սկսեց օրիորդը չնչապառա ձայնով, աղաչում եմ քեզ արի հօրս մօտ, հաշտվիր նրա հետ, նա վատ է զգում իրան: Ձեր երկկից խօսակցութիւնը նրա վրա շատ վատ ազդեց, նա զիջեց չըբանց, նա բարոյապէս տանջված է երևում... Այսօր առաւօտ ես զբաղեցրեցի նիւսեցի, որ նա իր բաղկաթուի մէջ նստած, գլուխը իր ձեռքերում առաւ՝ մինչև անդամ լաց եղաւ... Աղաչում եմ քեզ հաշտվիր նրա հետ...:

—Մարիամիկ, դու հասկանում ես արդե՞ր ինչ որ ասում ես... Հաշտվել նրա հետ՝ նշանակում է հրաժարվել բաղդից...:

—Դուք մի հրաժարվիր, զոհվիր ըստ սէրը դէպի իման հօրդ սիրոյ համար: Գեորգ, դու ինքդ դիտես որքան ես սիրում եմ չմային, գիտես որ ես էլ բաղդաւոր կը լինեի եթէ նա չը կնք դառնար, բայց եթէ դու այդ ամուսնութեամբ մահվան հարուած ես տալիս հօրդ, միթէ ըստ պարտաւորութիւն չէ դո՞ւք ըստ սէրը, որպէս դի հայրդ ապրել: Նա այս մի օրվայ մէջ այն աստիճան փոխվեց, աւելեց, այլալով, որ տեսնողը կասէր թէ մի օրվայ մէջ քան տարով ծերացաւ. նա երկար չի ապրել, Գեորգ...:

—Ձեռ հասկանում, սիրելիս, ինչպէս որդու բաղդը կարող է հօր համար մահվան հարուած լինել...:

—Ձը դիտեմ, եղբայր, բայց ինձ թվում է թէ

մաթիւ հասարակութեան: Ժողովին մասնակցում են աւելի քան 400 բժիշկներ: Ժողովի նախագահ է ընտրված պրօֆէսոր Մերթէնսկի, որը մի ճառ խօսեց Ռուսաստանում հոգեկան հիւանդութիւնների տարածվելու պատճառների և այդ հիւանդութեան առաջն առնելու միջոցների մասին:

ԱՐԻՍՏԱՆԻ մէջ բացվելի հայոց ծխական դպրոցի հոգաբարձուները խնդրում են մեղ տպել հետեւեալը: «Հոգաբարձութեան խոնարհաբար խնդրում է ձեզ, քաղաքի թերթի միջոցով հրատարակել, որ Արդահանում սոյն յունվար ամսիս կը բացվի նոր ծխական դպրոց և դրան հարկաւոր է մի ձայն ազդեց տ առուցիչ, որ կը ստանայ տարեկան 400 ռուբլի ուսնիկ, սենյակ, վառելիք և ծառայ դպրոցի հաշուի: Յանկացողները յիշեալ դպրոցում ուսուցչի լինելու թող բաւրեհան շուտափոյթ հաղորդել իրանց պայմանները Արդահան, Մկրտիչ Տէր-Սիմօնեանցին, արքունի գանձարանում»:

Բարձրագոյն ուկրաին պետական խորհրդի անդամ Վիկտորյանի նշանակված է ֆինանսների մինիստրութեան կառավարիչ, ֆինանսների մինիստր Բոնդը նշանակված է պետական խորհրդի անդամ և մինիստրների մասնաժողովի նախագահ: Մանասէն նշանակված է արդարադատութեան մինիստր:

Ստացանք ՐՈՍՈՎԻՑ պ. Տէր-Արքանանիկի կաղած ռուսահայ օրացոյցը 1887 թվականի: Օրացոյցը բաղկացած է 178 երեսից: Օրացոյցի մէջ կան տեղեկութիւններ փաստային, հեռագրական, երկաթուղային, և մարտային կանոնների մասին: Կցված են մի քանի մանրամասնութիւններ ռուսաց Կայսերական տան մասին, և ժամանակագրական տեղեկութիւններ հայոց պատմութեան նշանաւոր դէպքերից: Օրացոյցը գինն է 50 կօպէի:

Պատերազմական մինիստրի հրամանով ղինուտական ռուսաւարանների աշակերտները և գիւնուտական ծառայութեան մէջ դասվող անձինք, առանց թիւղութիւն ստանալու, իրաւունք չունեն մասնակցելու այնպիսի հանդէսներում, որոնք հասարակական բնագործութիւն ունեն:

Կիրակի օր, ամիս 11-ին, Թիֆլիսի ժողովականում նշանակված է պարահանդէս յօդուտ Հայոց Բարեգործական ընկերութեան: Տեղի կուսենայ և լիճակաւոր: Հարկաւոր պատրաստութիւնները տեսնվում են հանդիսին չըբղ կերպարանք տալու համար:

Յունվարի 3-ին, Թիֆլիսում, Պուշկինի փողոցի վրա գտնվող կահույրված սենյակներում ապրող օրիորդ Եկատերինա Կուլիցկայա անձնապահութիւնը գործից՝ ջրի մէջ լուծած ֆոսֆոր խմելով: Կուլիցկայա հրաժարվեց պարզել իր այդ

այդտեղ մի հանելուկ, մի գաղտնիք կայ, եթէ ոչ դու մեր հօրը շատ լաւ ես ճանաչում և դիտես որ նա մեղ երկուսն սիրում է, գիտես որ նա երբեք խոչնդոտ չէր դառնայ ըստ իմ բաղդին... Այո, ինձ թվում է, որ նրա մերժման մէջ, ըստ վերաբերմանը նրա վարմունքի մէջ մի գաղտնիք կայ...:

—Հաւատացնում եմ քեզ, անգին, որ նրա վարմունքի մէջ ոչինչ հանելուկ, ոչինչ անբացատրելի գաղտնիք չը կայ. յայտնի հասակին, ծերութեանը հասած մարդկանց յատուկ է անհուսոյ, անհիմն, աննպատակ կամայականութիւն: Հօրս ասածների մէջ չը կայ որամարանութեան նշաններ անդամ. նրա վարմունքի մէջ ուրիշ բան չը կայ, եթէ ոչ անասանական կամայականութիւն, այն որ ուսուցին ասում են самодурство, մի բառ, որի իմաստը մարդկային ուրիշ որ և է քաղաքակրթական լեզուով արտայայտել անհնարին է...:

—Գուցէ դու ուղիղ ես ասում, Գեորգ, դուցէ ես եմ սխալվում, վերջապէս օրիորդը վերկնաւորով և արտասանները սրբելով, ես դուցէ այլևս անընդունակ եմ լօղիկաբար մտածել, ես չեմ դատում,—ես զգում եմ միայն... Ես պարզ տեսնում եմ միայն որ հօրս կեսերը վտանգի մէջ է, ուրիշ ոչինչ չը գիտեմ... Յոսեփիւն, գործիք այնպէս, Գեորգ, ինչպէս քեզ թեկաղութիւն է սիրող և խելքը... Ես կերթամ, գիտեմ թեկաղութիւն...:

—Յոսեփիւն, կրկնեց կեղբայրը:
(Կը շարունակվի)

վարժուհիները պատճառները և մեծաւ սարսափելի տանջանքներով:

Շնորհակալութեամբ ստացանք Մկրտիչ Էմինի «Монсей Хоренский и Древний Эпост Армянский» ուսումնական քննութեան հայերէն թարգմանութիւնը՝ «Մովսէս Խորենացի և հին Հայկական վէպ» վերնագրով: Այդ աշխատութիւնը ուսմանը թարգմանել է խաչատուր Յովհաննիսեանց: Թարգմանութեան լեզուն բաւական պարզ է: Գիրքը բաղկացած է 71 երեսից, տխուր մաքուր է: Տպւած է Թիֆլիսում, Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1887 թվին:

Կ. Պոլսում յուն վարդապետ Լույս տեսաւ մի նոր հրատարակութիւն «Մարտիրոս» վերնագրով, որը լույս աշխարհ է տեսնել երկու շաբաթը մի անգամ: Սերովբէ վարդապետ Տէրմիշեան մտադրութիւն ունի իր խմբագրութեամբ հրատարակելու մի նոր ամսագիր «Լեզու» անունով:

ԲԱՎՈՒՆԻՑ մեզ գրում են. «Ամսիա 5-ին, գիշերվայ ժամը 11 1/2-ին, քաղաքի հարաւային կողմում ահագին կրակ երեւցաւ, որից լուսաւորվեցան բոլոր շրջակայները: Նշոյն միջոցին լսելի եղաւ սաստիկ ձայնիւ: Նշնագրում են, որ Պոլսու կայսրանի մօտ գտնվող հրաբուխն է, որ սկսել է նորից ժայթքել: Մասնաւորութիւնները շատ շուտով կը հարողքեն»:

Վաղը, կիրակի օր, ամսիա 11-ին, առաւօտեան ժամը 12-ին, Թիֆլիսի քաղաքային Արհեստաւարաց ուսումնարանում տեղի կունենայ տարեկան ակումբ:

Երկուշաբթի, ամսիա 12-ին, երեկոյեան 7 1/2 ժամին Թիֆլիսի քաղաքային դռան նիստ կունենայ: Այդ նիստին պէտք է ընտրվեն քաղաքային վարչութեան համար երկու անդամ, քաղաքային քարտուղար, Առեւտրական պատգամաւորութեան անդամներ, փոխտու արկղերի վերատեսուցող անդամներ, քաղաքային ուսումնարանական մասնագործի անդամներ և այլն: Նշոյն նիստում կը քննվի ձայնաւոր Ալիսանովի յայտարարութիւնը, որը մեղադրում է վարչութեան անդամ Պոպովին իրաւաւնջութեան մէջ:

Իշխան Նաւէ Բէգիմբեգով խնդրում է մեզ տուել հետեւեալը. «Երկու տարի առաջ, որպէս կը յիշեն ընթերցողները, Թիֆլիսի հայ հասարակութիւնը չքեղ կերպով կատարեց մեր քաղաքի վանքի մայր-եկեղեցու աւագ քահանայ տէր-Յովհաննէս Սարգսեանցի քահանայական պաշտօնի մէջ ծառայութեան յիսնամեայ յօդակները: Արժանապատիւ տէր-Յովհաննէս հօր յիսնամեայ յօդակները կատարելու օրը, յօդակներին ներկայ եղող անձինք վճարեցին տէր-հօր անուանով մի ստիպելովապա պահել և ստորագրութիւն բացեցին: Մինչև օրս ստորագրութեամբ ժողոված է 1,000 ռուբլոյ աւելի, որը արժէթղթեր դարձրած, յանձնված է մեր բանկերից մինում շահեցողութեան համար: Այժմ պարզ եւ համարում յայտնել, որ վերջոյիշալ ստորագրութեան թերթին ինձ մօտ է և ստորագրովի ցանկացողները կարող են ինձ դիմել, որովհետեւ դեռ ստորագրութիւնը չարանակվում է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱՔԱՆԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհը համարեա նոյն դրութեամբ է հանդիպում նոր տարուն, ինչ դրութիւն որ ունէր վերջին արկալից ժամանակները: Նշոյն դիպումատիական մրցումները, նոյն քաղաքական բազմադիմի բանակցութիւնները, նոյն զինված խաղաղութիւնը, նոյն ներքին տնտեսական հարցերը, նոյն սոցիալական խնդիրները, նոյն իրաւունքներ, Բաղրաբան, Թիւրքան և այլն և այլն: 1886 թվականը հարուստ էր քաղաքական այնպիսի դէպքերով, որոնք պահանջում էին շուտափոյթ վճիռ: Եթէ ընդունենք որ իրանդական խնդիրը Մեծ-Բրիտանիայի ներքին կեանքին է վերաբերում, եթէ ընդունենք նոյն իսկ, որ Պարսկաստանի, Բելգիայի, Գերմանիայի, Անգլիայի, Հարավային Ամերիկայի շարժումները տեղական բնուրույթիւն ունենան,—այնու ամենայնիւ Բալ-

կանի խնդիրը, և դրանով էլ Թիւրքիայի և Արևելեան հարցերը բաւական դժուր պատճառներ են, որպէս զի եւրոպական քաղաքական աշխարհում մի վերջնական դրութիւն հաստատվէր... Սակայն այն վերջնական դրութիւնը չը կայ, և ահա նոր տարին սկսվեցաւ,—բայց դժուրը աւելի խառն են, եւրոպական պետութիւնները աւելի լարված են, և տրամադրութիւնները աւելի բարդված:

Այս րօպէսի եւրոպան պատրաստ է մինչև 15 միլիոն դրոք դուրս բերել պատերազմի դաշտը, սակայն ոչ պատերազմի դաշտը դուրս գալու միջոց կայ, և ոչ էլ զորանոցներին հանգիստ տալու գրաւական... Եւրոպան մի տեսակ ճգնաժամի մէջ է գտնվում, որի թույլ արտայայտութիւնն է միայն քաղաքական արտաքին յարաբերութեան խնդիրը: Ամենածանր դրութիւնը այն սոցիալական-տնտեսական դրութիւնն է, որ այսօր ծանրանում է եւրոպական շատ երկրներին վրա: Ֆրանսիան պէտք է լուծի բանտրական հարցը, պէտք է կանոնադրի իր ներքին տնտեսական կեանքը, և դադարեցնել երկրներին վիճակը և միշտ պատրաստ լինի Գերմանիայի հետ իր հայրենասիրութեան հաշիւները տեսնել իշխան-օթարքիցի գեղեցիկ հովանեւում: Գերմանիան իր առաջ ունի գաղթականութեան խնդիր, նա պէտք է խաղաղացնի բանտրներին շարժումը, պէտք է դադարեցնի սոցիալական ներքին շարժումները, նոյն Գերմանիան պէտք է դիտէ Ֆրանսիական հանրապետութեան տրամադրութիւնը, պէտք է վերլուծի գեներալ Բուլանտէի ճառերը, և պէտք է հանգցնէ այն կրակը, որը կարող է բլրեցնել Բալկանի խնդիրը և իրան էլ անպատեհ մի ժամանակ գործի հրաւիրել: Աւստրո-Ունգարիայի դրութիւնը ծանր է. Հաբսբուրգեան պետութիւնը պէտք է լուծի իր ներքին բազմալեզու ժողովրդի յարաբերութեան խնդիրները, պէտք է լրջութեամբ դիմակայի մի շարք սոցիալական և ազգայնական խնդիրներ, Աւստրիան պէտք է պաշտպանի իր շահերը Բալկանի վրա, և այդ էլ այն ձևով, որ ոչ Գերմանիան սրտնեղի, և ոչ էլ եւրոպական քաղաքականութիւնը դժգոհութեան առիթներ ունենայ: Իսկ Անգլիան,—Անգլիան աւելի շատ գործեր ունի կատարելու: Արևմտեայ երկրները իր շահերը խնդրելով, ապահովել իր Հնդկաստանը, և առաջ վարել արտաքին քաղաքականութեան այն հսկայական կազմը, որի մէջ մտնում է Նիդերլանդ, Թիւրքիայի հարցը, և որը չօչվում է եւրոպական քաղաքականութեան բոլոր կենտրոնը, անարգել դարձացում է ինքնուրոյն աճումն է պահանջում:

Հարկաւոր տարիներով ճնշված երկիրը, այսօր այլ ևս համբերութիւն չունի, և յուսանալով շարժումներ է գործում իր ներկայ դրութիւնից դուրս գալու համար,—այդ յուսանալով շարժումները մեծ հոգն է պատճառում լճագետի կառավարութեանը, և երկիրը օրից օր աւելանում է... Անգլիան ստիպված է առանց յետաձգելու վճարել իր ներքին խնդիրները, ապահովել իր Հնդկաստանը, և առաջ վարել արտաքին քաղաքականութեան այն հսկայական կազմը, որի մէջ մտնում է Նիդերլանդ, Թիւրքիայի հարցը, և որը չօչվում է եւրոպական քաղաքականութեան բոլոր կենտրոնը, անարգել դարձացում է ինքնուրոյն աճումն է պահանջում:

Խաղաղի ներքին գործերը շատ էլ լաւ դրութիւն մէջ չեն. և բացի դրանից Հռոմի կառավարութիւնը ստիպված է խառնել և Բալկանի գործերին մէջ. Սլաւոնիան պէտք է դադարի իր ներքին յեղափոխական շարժումները հանգստացնելով. Բելգիան, Շվեդիան դեռ երկար պէտք է դադարեն բանտրական խնդիրներով, այն բանտրական խնդիրներով, որոնք յուզում են և Ամերիկան Տնտեսական ճգնաժամի ճնշումից ազատ չեն եւրոպական փողոցի երկրներին էլ: Յուսանալով յարմար առիթի է սպասում իր հաշիւները Թիւրքիայի հետ տեսնելու համար: Թիւրքիան շարունակվում է քայքայվել. Սերբիան, Բուլղարիան, Չերնոգորիան սպասում են ինչ ինչ կը լինի իրանց խախուռ ապագան: Իսկ Բալկանի իշխանագործ Բալգարիայի դրութիւնը, խնամակալութեան վիճակը, բաղադրական պատգամաւորութեան ծանաղարդողութիւնը, իշխանի ընտրութեան հարցը, և եւրոպական պետութիւնների դէպի Բալգարիա բռնած ընթացքը, Ռուսաստանի ցանկութիւնները արդէն մանրամասնաբար յայտնի են ընթերցողներին: Քաղաքական կենտրոն վիճակ ոչ միայն տիրապետում է Եւրոպայում, այլ և Եւրոպայից դուրս. Միջին-Ասիայում քաղաքական պատերազմներ են ծագում,—Չինաստանը չէ կարողանում դիմադր արտաքին ճնշումներին, Հարավային Ասիայում անկախութեան և վերջնական անկման խնդիր է ծագել. Հիւսիսային Աֆ-

րիկայում անվերջանալի են դարձել պատերազմները: Տնտեսական, բանտրական, սոցիալական խնդիրները յուզում են և ամբողջ Ամերիկան... Այդպիսի դրութեան մէջ է ներկայանում նոր տարուն քաղաքական աշխարհը: Թէ ինչ ընթացք կը բռնեն քաղաքական ընթացիկ գործերը,—այդ մօտիկ ապագան ցոյց կը տայ: Անհերքելի է միայն, որ Եւրոպայի ներկայ ճգնաժամի պատճառները շատ խոր և շատ ծանրակշիռ են. ներկայ դրութեան դեկավարը տնտեսական-սոցիալական մի բարդ խնդիր է, որը վաղուց կենսւթ է առել, և որի լուծումը կը պահանջի երկար ժամանակ, և հիմնական գործունէութիւն եւրոպական պետութիւնների կողմից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գեկտեմբերի 31-ից, անցեալ թիւականի, Լճագետի հեռագրում են, որ յանդարձակի և շատ կարճատև հիւանդութիւնից յետոյ, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Լորդ Նիլսոնը մեռաւ:

—Հեռագիրը հարաբերեց մեզ Բիսմարկի բէյա-տագի մէջ խօսեցած ճառի մանրամասնութիւնները. «Մեր բարեկամութիւնը դէպի Ռուսաստանը նոյնն է, ինչ որ եղել է 1870 թվի պատերազմի ժամանակ, առաջ Բիսմարկ: Այդ ոչինչ կանխածի ենթակվել չէ կարող: Ռուսաստանը Գերմանիայի մէջ բարեկամութիւնը պահպանելու մէջ չէ դժուարութիւն, այլ Ռուսաստանի և Աւստրիայի մէջ, որովհետեւ այդ դէպքում խնդիրը վերաբերում է միմեանց հակառակող շահերին: Մենք մեզ վրա ենք վերցրել միջնորդի դերը: Մեզ անկասկած ուսումնող կը համարեն Աւստրիայում և աւստրալիա Ռուսաստանում. բայց այդ բանի հետ հաշտվել հեշտ է, եթէ միայն մեզ կը յաջողվի պահպանել խաղաղութիւնը Գերմանիայի և Եւրոպայի համար»:

—Փարիզից հեռագրում են հետեւեալը. «Երէկ բացվեցաւ ազգային ժողովը՝ նստաշրջանը. անաւտի մէջ նախագահ կարնո մի ճառ ասաց, որի մէջ այն միտքն էր յայտնում, որ պատերազմը աւելի կը քայքայի այժման տնտեսական ընթացքը: Բոլոր ազգերը և կառավարութիւնները խաղաղութիւն են ուզում, մասնաւոր Ֆրանսիան, որը, այնու ամենայնիւ, կարող է ստիկանդները ամբողջ ինքիօններ, եթէ նրա ցանկութիւնները խաղաղ կը լինեն»:

—«Journal de St.-Petersbourg» մասնաւոր աշխարհի Բիսմարկի և Ֆրանսիական սենատի նախագահ կարնո ճառի վրա, ուղարկութիւն է դարձնում այն երկրորդ վրա, որ բոլոր կառավարութիւնները խաղաղասիրական ձգտումներ են արտայայտում: Լրագիրը յոյս է յայտնում, որ սկսված նոր տարին ի դերն չի հանի այդպիսի քաղաքական նախադրեցումները:

—Վիեննայից, յունվարի 2-ից հեռագրում են, որ զանազան կողմերից ստացվող լուրերը միջազգային յարաբերութիւնների լաւանալու մասին, հաստատվում են: Կրտս կարնոյի օրգանը այն միտքն է յայտնում, որ միջնորդի դերը վերցնելով Գերմանիան թէ՛ Վիեննայում և թէ՛ Պետերբուրգում կը գտնի մեծ պատրաստակալութիւն խաղաղ և արդարացի կերպով վերջացնելու բոլոր տարաձայնութիւնները:

—Փարիզից հեռագրում են, որ ազգային ժողովի նստաշրջանը բանալով, նախագահ Ֆլոբէ մի ճառ ասաց, որով հրաւիրեց բոլոր կառավարութիւններին համաձայնութիւն կայացնել, որը հարկաւոր է նրա համար, որ Ֆրանսիան կարող լինի դրանի հարկան երկրներին յարգանքը:

—Ֆրանսիական Ֆինանսների մինիստրը Խոսեւրով 1887 թվի բիւջետի վրա, յայտնեց, որ բիւջետի մէջ մտցրած է 86 միլիոն պատերազմական արտախաղ ծախքերի համար, 71 միլիոն նոր հրաշմանդ պատրաստելու համար, և 15 միլիոն արանցների և ամբողջների համար:

—Բրիտանից հեռագրում են, որ բէյաւտագը, 186 ձայներով առաւելութեամբ ընդգրկելով 154-ի, ընդունեց ազատամիտների առաջարկութիւնը միայն երեք տարով հաստատելու կառավարութեան պահանջած յօդքի թիւը: Այդ պատճառով բէյաւտագը արձակված է: Նոր ընտրութիւնները նշանակված են փետրվարի 9/21-ին:

—Յունվարի 5-ին բաղրաբանական պատգամաւորութիւնը հասաւ Հռոմ:

—Վիեննայից հեռագրում են, որ աւստրիական պարլամենտը կը բացվի յունվարի 16-ին:

—Պոլսից հեռագրում են, որ Յանկով, պատաս-

խանելով Պոլսում եղող բաղրաբանների ճառին, յայտնեց, որ յոյս կայ բաղրաբանական ճգնաժամը շուտով վերջացնելու. Բ. Կրտս աշակցութեամբ:

—Սօֆիայից հեռագրում են, որ բաղրաբանական յեղափոխութեան մէջ մասնակցող սպաները Օդեսայից Պոլս են գալիս. Սօֆիայի կառավարիչները ամենայն միջոց ձեռք են առնում, որպէս զի այդ սպաները թիւրքաց տանձաններից ոչինչ թշնամական ցոյցեր չը կարողանան անել:

—Յունվարի 6-ին իտալական արտաքին գործերի մինիստր Բոլիան ընդունեց բաղրաբանական պատգամաւորներին, և այն միտքը յայտնեց, որ պատգամաւորութեան Սօֆիա վերադառնալուց անմիջապէս յետոյ, բաղրաբանական կառավարիչները պէտք է վճարական դիրք բռնեն: Երկուսից մէկը կամ շարունակել այժման դրութիւնը, որը վերտանգ է սպառնում Եւրոպայի խաղաղութիւնը և կարող է թուլացնել Եւրոպայի դէպի Բաղրաբանական համակրութիւնը, և կամ համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի հետ Բոլիան ոչինչ խորհուրդներ պատգամաւորութեանը չը տուեց, միանգամայն չը ցանկանալով խառնվել բաղրաբանների ներքին գործերի մէջ:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օղապարիկների դէմից—յետոյ, գիտութիւնը դադարեց է այն հարցով, թէ ինչ միջոցներով կարելի է դարձնել օղապարիկը այս կամ այն կողմը, և ուղեցած ուղղութիւնը տայ: Պատերազմական նպատակներին համար այժմ մշակվում է մի այնպիսի օղապարիկի նախագիծ, որով կարելի լինէր մի տեղից տեղափոխվել մի ուրիշ յայտնի տեղ, ուղեցած ժամանակը, և ամեն տեսակ եղանակներին փարիզի պաշարումը ապացուցեց թէ որքան անհրաժեշտ են այդ տեսակ օղապարիկները: Այդ ժամանակ փարիզից բաց թողվեցաւ 64 օղապարիկ, որոնցից միայն 32-ը նպատակին հասան, միւսները կամ տեղ չը հասան, կամ դերի ընկան: Այժմ այդ տեսակ օղապարիկների համար մի քանի նախագիծեր են ներկայացված: Այդ նոր օղապարիկներով կարելի է մի տեղից միւսը տեղափոխվել, բայց շատ ծանր կերպով և այն էլ շատ լաւ եղանակով: Ամենալաւ նախագիծը կազմել է Անգլիացի Thager. դրա օղապարիկը աւելի յարմար է պատերազմական նպատակների համար, և կարող է բարձրացնել բացի մարդկերանցից, նոյնպէս և մի քանի թռչուններ:

Մինչդեռ մեզ մօտ Վրնդեան տօները բոլոր գեղեցկութիւնը խաղաղութիւն է ցուրտ եղանակների, ձիւնի, ցիւնի և քամիների շնորհիւ, Աւստրալիայում, այդ հարաւային երկրում, Վրնդեան տօները տօնվում են ամենաառաւել կերպով, գեղեցիկ եղանակի շնորհիւ, երբ Վրնդեանից ցոյց է տալիս 20⁰, երբ գեղեցիկ բուսականութիւնը զբաւում է իւրաքանչիւրի սիրտը և հոգին, երբ արանցիկ եղանակը տրամադրում է ամենաազգայնաւոր անդամ օգտվել տօների ազատութիւնից: Այնպէս, հեռու Աւստրալիայում, Վրնդեան տօներին բնակիչները ուսումը և հիւթայի կեռաս, և ամբողջ գիշերները անց են կացնում ուրախութեամբ բաց դաշտերում և կանաչով ծածկված այգիներում ու պարտիզներում: Իսկ մեզ մօտ, մարդիկ իրանց կրօնական ոգևորութիւնը արտայայտելու համար Վրնդեան և Միլոտիւնեան տօնի օրը ստիպված են լողանալ այնպիսի ջրում, որը ծածկված է սառուցով, և որը կարող է սառնանել ամենակրօնամուլ մարդուն անգամ:

Գերմանացի Բուլանտէի անունը օրից օր մեծ ժողովրդականութիւն է գտնում հանրապետական Ֆրանսիայում: Նրա ճառերը էլէկտրական ազդեցութիւն են գործում նոյն իսկ երեսասարկութեան վրա: Ուրախ, եռանդոտ, դեռ ջանքի և հայրենասիր-դիմութեամբ Բուլանտէն ոչ մի միջոց ձեռքից չէ թողնում գրաւոր գործի սիրտը և հոգին: Չօրքը սիրում է այդ պատերազմական միմիստրին անկեղծ կերպով: Նրա օրով Ֆրանսիայում գիտութեան հանդէսները, զորայաղերը, և այլ պատերազմական վարժութիւնները ստացել են մի տեսակ փայլ և ոգեւորեցուցիչ ոյժ: Բուլանտէ վառում Ֆրանսիացիներին մէջ պատերազմական եռանդ և ոգևորված հայրենասիրութիւն: Փարիզի ժողովուրդը ամեն քաղաքախում արտայայտում է իր սէրը դէպի Բուլանտէ: Գեկտեմբերի 27-ին Բուլանտէ մի երկրորդ տուեց: Այդպիսի միմիստրական երկրներին հազիւ ներկայ էին լինում 200—300 մարդ. Բուլանտէի մօտ հաւաքվեցաւ մօտ 3 հազար մարդ: Բնակարանում համարեա տեղ չը կար: Դաշնակցները լցրել էին թէ դիպումատիայի, թէ գրականութեան, թէ պարլամենտի և թէ զինարարական ներկայացուցիչները: Ինքը քաղաքաբարոյ-աստիճան—միմիստրը մինչև ժամը 11-ը կանգնած մուտքի մօտ ընդունում էր իր ծանօթ և անծանօթ հիւրերին սիրալիր կերպով: Գերմանացի Բուլանտէի անձնատարութիւնը ներկայ պատերազմական տրամադրութեան ժամանակ մի կենդանի ոգևորութիւն է դարձել Ֆրանսիայի համար:

